Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
«08»12. 2017. թիվ 8որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է քննչների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-S-001-18	Հրազենի գործադման հմտություններ	10

1. I-S-001-18. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է քննիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ: